



Գտեք COVID-19-ի դեմ պատվաստումների կենտրոններ մոտակայքում

COVID-19-ի դեմ պատվաստանյութը հասանելի է 6 ամսական և ավելի բարձր տարիքի բոլոր անձանց համար:

- Պատվաստանյութն անվճար է:
- Պատվաստանյութը ստանալիս ձեզ չեն հարցնի ձեր ներգաղթային կարգավիճակի մասին:
- Պատվաստանյութ ստանալու համար ձեզ հարկավոր չէ առողջության ապահովագրություն ունենալ:
- Պատվաստանյութերը հասանելի են Լոս Անջելեսի շրջանի հարյուրավոր վայրերում, ներառյալ կլինիկաները, դեղատոները, մանկաբուժների գրասենյակները, դպրոցները, պաշտամունքի վայրերը, զբոսայգիները, մետրոյի կայարանները և այլն:
- Շատ վայրեր նախապես ժամադրություն չեն պահանջում:

Լոս Անջելեսի Շրջանում պատվաստվելու 3 հեշտ եղանակ.



- 1 Այցելեք ph.lacounty.gov/howtogetvaccinated կայք և օգտագործեք որոնման հնարավորությունը՝ ձեզ համար ճիշտ կենտրոն գտնելու համար:
 - Եթե երեխա եք բերում պատվաստման, նախապես զանգահարեք՝ համոզվելու, որ կենտրոնն ունի ձեր երեխայի համար ճիշտ պատվաստանյութ և հարցրեք ծնողի կամ խնամակալի համաձայնության մասին:
 - Խնդրում ենք նկատի ունենալ, որ դեղատոների մեծ մասը չեն կարող պատվաստել մինչև 3 տարեկան երեխաներին:
- 2 Զանգահարեք Պատվաստանյութերի Հարցերով Զանգերի Կենտրոն (833) 540-0472 հեռախոսահամարով: Զանգերի կենտրոնը բաց է ամեն օր՝ առավոտյան 8:00-ից մինչև երեկոյան 8:30-ը:
 - Զանգերի կենտրոնը կարող է կազմակերպել նաև պատվաստումներ տանը և անվճար փոխադրում:
- 3 Զանգահարեք 2-1-1 շուրջօրյա հեռախոսահամարով. այս համարը տեղեկություններ է տրամադրում բազմաթիվ լեզուներով:



Լոս Անջելեսի Շրջանում առկա բոլոր պատվաստանյութերը անվտանգ են և արդյունավետ՝ կանխելու լուրջ հիվանդությունները և մահը COVID-19-ից:

- 12 տարեկան և ավելի բարձր տարիքի մարդիկ կարող են ստանալ Pfizer, Moderna կամ Novavax պատվաստանյութը:
- 12 տարեկանից ցածր տարիքի մարդիկ կարող են ստանալ Pfizer կամ Moderna պատվաստանյութը:
- Պատվաստումների իրավասության և պատվաստումների ժամանակացույցի մասին ավելին իմանալու համար այցելեք ph.lacounty.gov/covidvaccineschedules կայք:



VaccinateLACounty.com

8/25/22 (Armenian)



COUNTY OF LOS ANGELES
Public Health